

լողք այսմ քերթողական արհեստիւ ճոխացեալ տառիս, յիշեցէք յաւժար կամաւք ի մաքուր յաղօթս ձեր զամէներջանիկ եւ զպատուական հայրապետս մեր... , որոյ վեհ հրամանաւն զծագրեցաւ զիրքս այս իմաստասիրական, տենչալի խաղալիկս աշակերտեալ ուսման սիրող մանկանց :

Նաեւ ընդ բազմավաստակ սուրբ հօրս յիշեցէք զբաղկակից եղբարքն եւ զաշակերտեալ մանկունքն իւր զյոզնահանձար եւ զբազմարուեստ գիտաչատուր վարդապետն Կեսարացի, եւ զմաքրասնունդ եւ զշահողն ամենայնի զՓիլիպպոս վարդապետն, որ յոլով եւ բազմադիմի երկ եւ աշխատանք ունին ընդ անարժանութիւնս մեր ուսմամբ եւ ոգէչահ խրատով... :

«Այլ եւ յիշեցէք ի սուրբ սրտի ձերում զաշակերտակից սոցա եւ զհամշիրաք վարդապետքն՝ զխարաղնազգեացն զԹումայ վարդապետն եւ զԲաջ տելետինն զՄելիսէէք վարդապետն (եւ) Զաքարիա վարդապետն եւ զմիւս խաչատուր վարդապետն եւ զՅակոբ վարդապետն եւ զկայծակնամաքուրն գտեր յեսային, որ յոլով աշխատի ի վերայ միաբանից եղբարցս, եւ զաղօթասէր եւ զբաղձալին բնակից զհամշիրաքն իմ գտեր Ղազարն եւ գտեր Յակոբն եւ գտեր Գրիգորն եւ գտեր Սիմոնն (Զուղայեցի) եւ զայլ համաշունչ եւ զմիախորհուրդ եղբարքս եւ զաշակերտեալ մանկունքս, որ կան կաճառեալ եւ ժողովեալ ի համալսարանի կաթողիկոսարանիս ...